Իշխանն Մանիաւնին՝ Լամաւսոյ, Ժեռմանկանն[80] եւ Անամուռին Հալկամն.

Իշխանն Նորբերդոյ եւ Կաւմառտիասոյ՝ Սեւաստիաւսն Հեռի.

Իշխանն Անդաւշծին եւ Կուպային՝ Պաղտինն.

Իշխանն Մաղվայոյ եւ Սիկոյ եւ Պալապօլին՝ Կեռ Սակն.

Իշխանն Մանաւվղատին եւ Ալարոյ՝ Միխայլն.

Իշխանն Լակռաւենոյ՝ Կոստանդինն եւ Նիկիֆոռն81.

Իշխանն Կալանաւնաւռսոյ, Այժուտապին, Սուրբ Սոփէ եւ Նաղլաւնին՝ Կեռ Վարդն[82]»:

Ի դասս եպիսկոպոսաց զոր նախակարգէ պատմիչ մեր քան զաշխարհականս, չիք երկբայել զի գոյին եւ բազում այլ եպիսկոպոսք՝ 'ի մարզից Հայոց Մեծաց՝ հրաւիրեալք, թէ եւ ոչ էր մարթ *ամենայն* եպիսկոպոսաց համահաւաքել, ըստ Կիրակոսի. որպիսիք են, յիշեալն 'ի սմանէ **Անանիա** եպիսկոպոս Սեբաստիոյ, եւ յայլմէ յիշատակագրէ՝ **Ստեփանոս՝ Տիրացու** մականուանեալն՝ արքեպիսկոպոս Վանտոսպայ, դրուատեալն 'ի Ն. Լամբրունեցւոյ եւ վկայ արժանաւորութեան իւրոյ. սա վաղագոյն հրաւիրեալ 'ի կաթողիկոսէն 'ի Հռոմկլայ, ոչ հայելով 'ի ծերութիւն հասակին՝ չոգաւ առ նա, եւ անտի՝ ըստ գրելոյ ուղէկցի նորին *Յակոբայ* վարդապետի. «Ա՛յլ ճանապարհ առաջի եդաւ իմում Տեառնս եւ կաթողիկոսին Հայոց. զի կոչեցեալ եղեն 'ի Լեւովնէ, որ այժմ զվաղնջուցն 'ի մերմէ ազգէ եւ զընկեցեալն յերեսաց տեսողին՝ զթագաւորական անուն՝ զոր ունէին Հայք, սա միայն ստացաւ, զօգոստական եւ զծիրանափայլ պատմուճանն. եւ ընկալաւ օծումն՝ որպէս զմեծն Տրդատ, կամակցութեամբ արիական ազգին Յունաց, (փոխանակ գրելոյ Փռանկաց կամ Հռովմայեցւոց), բերեալ նմա նշան զխաչանիշ թագն. եւ նորա պատուասիրաբար կոչեցեալ զհոգեւոր Տէր Գրիգորիս, զի երթիցէ եւ օծցէ զնա սրբարար եւ մաքրագործակ միւռոնաւն, եւ պսակեսցէ զգլուխն խաչանշան դրոշմաւ. եւ Հոգեւոր Տեառն ընդ իւր առեալ զիմ Տէրն», եւ այլն: Յայտ է թէ ընդ սոսին՝ առնոյր տանէր ընդ իւր կաթողիկոսն՝ եւ զեպիսկոպոսունս հայրապե-

---

80 Սմբատ՝ *Ժամնկանն*:

81 Սմբատ, «Պարոն Կոստանդին տէր Լակռաւենոյ, Պարոն Նիկիֆոռիդ եղբայրն»:

82 Սմբատ *Աղոլ* գրէ զՆաղլօն, եւ փոխանակ երեցուն այլոցն՝ կարգէ նոր անուն՝ *Կոտրատ*: